

ROMA 16. 3.

ՀՌՈՒՄ 16. 3.

Arcevescovo Ghiurekian

I sentimenti espressi da S. E. Rovma. in nome della congregazione armena sono giunti molto grati augusti sovrani che ringraziano sentitamente.

Ministro Mattioli

Երկրորդ օրը, 17 մարտ կիրակէ, Վենետիկի Սուրբ Ղազարու հայ Միաբանութիւնը, մասնակցութեամբ Մուրատ-Ռափայլեանի աշակերտաց ու վարդապետներուն, Զբոց Աստուած գոհարանական աղօթքը հնչեցուց եկեղեցւոյ մէջ, խնդրելով Նորին Վեհափառութեան Վիկոնոր Էմանուէլ Գ. Թագաւորին համար երկայն ու անամպ կեանք՝ իբր զբաւական երկրին մեծագոյն զարգացման և հայ գաղութին երջանկութեան:

ԽՄԲ. ԲԱԶՄ.

**ԲԱՐՈՑԱԿԱՆԻ ԵՒ ԿԱՐԳԱՉԱՀՈՒԹԵԱՆ**

**ՈՒՆՈՒՄԸ** ԱՆՊԵՒԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ:



ԲԱՐՈՑԱԿԱՆԻ ուսումը անգլիական (grammar schools) և (public schools) դպրոցներուն մէջ կը գրէ prof. Emile Cann, առաջնորդ ունենալով բրիտանական ընկերային և անհատական կեանքի ամէն գործի մէջ յայտնուած այն օգտախնդիր մտածութիւնը, բարձրը չձկտիր, չներշնչուիր Քանթի և Յեղափոխութեան սկզբունքներով, այն բոլոր վեհանձն ու խոր բաներով զոր արդի ոգին մեզի տուած է. այլ, ի փոխարէն, շատ յարմար երիտասարդներու կարողութիւններուն, պիտոյից և մտքին, որոնց նուիրուած է:

Բարոյակակեր, Անգլիացիին շատ լաւ կը զգայ իր ազատութիւնը և անհատականութիւնը. ասոնք են ահա զգացմաները զորս պէտք է կրթել իր մէջ որպէս զի իր իրաւունքները պահանջելու և իր ազատութիւնը գործածելու ժամանակ գիտնայ ուրիշին չվնասել: Այս նպատակին համար վերանցական տեսութիւնները անօգուտ են, թիչ մը ողջմտութիւն գործնականին մէջ բաւական է անհատին փափաքները ամենուն շահերուն հետ հաշտեցնելու համար: Ազատութիւնը, անձնականութիւնը — կ'ը-

սեն երիտասարդներուն, — անբռնաբարելի իրաւունքներ են, ամէն ոք ձեզի նման պէտք է վայելէ գանձը, անհրաժեշտ է ուրեմն յարգել ուրիշին մէջ այն բանը զոր կ'ուզէ մարդ որ իրեն մէջ յարգուի:

Պարտքը գերագոյն օրէնք մը չէ, բացարձակ հրամայական. գործնական դատողութենէ թելադրուած խորհուրդ է, հարկաւոր և օգտակար հրահանգ մը:

Honesty is the best policy. Հուսաւատարիկը յաւագոյն քաղաքակրօնը ինն է, ահա օգտին և համեստին երկու գաղափարները կը միանան: Խեղճ պատճառարանութիւն մը եթէ կ'ուզենք, բայց առաջ բերած բարիքին համար ոչ արհամարհելի:

Անգլիական դպրոցներէն շատերուն մէջ բարոյականի վարդապետութեան մասնաւոր ուսում չկայ, այլ առօրեայ կեանքին մէջ պատահած դէպքերէ նոյն երիտասարդաց փորձով, համոզիչ դաս մը կը հանուի: Ազնուական կամ հարուստի մը տղան հակաճառութեան կը բռնուի, հասարակ բառ մը կ'ըսէ, իրմէ աւելի համեստ դասակարգէ տղու մը, որուն հարուածին, պատասխաններուն և կոուփին վրայ Head — master մեծապիւր բոլոր աշակերտները կը հաւաքէ, և պարզ ծանրութեամբ մը, վստահ իր ունկնդիրներուն լաւ դատողու-

Թեան վրայ, կը ցուցնէ թէ ինչպէս սին գոռոզութիւնը և հպարտութիւնը մարդկանց մէջ առեւտրութեան և ընկերային պայքար- ներու պատճառ կ'ըլլան: Աշակերտները ուշով կ'ունկընդոնին այս դասին վասն զի վերացական դաս մը չէ, այլ իրական դէպքերու տրամաբանութիւնն է որ կը խօսի:

Բարոյականի դասը կրօնքի դասէն ալ կը հանուի: Հին և նոր կտակարանները պատմութիւններով և առակներով լի են, որոնցմէ կրնայ գործնական կեանքի օրի- նակներ և բարոյական յորդորներ հանուիլ, կէ այս շատ դիրքին է, մանաւանդ երբ մը- տածենք թէ բողոքականութիւնը զուտ բա- րոյական կրօնք մ'է, ըրիտօնէական ըս- կզրունքն և մարդկային բանավարութենէն առաջ եկած:

Բարոյականի ուսման այս կերպը ան- տարակոյտ ազգու է. լատին երիտասարդ- ներու միտքը աւելի նուրբ, ճաշակաւոր, աշխոյժ կրնայ ըլլալ, բայց անգլիացի ե- րիտասարդները աւելի լուրջ կ'իլեն դը- պրոցներէն, զօրաւոր՝ կեանքի դժուարու- թեանց դէմ, և ընկերական յարաբերու- թիւններու մէջ աւելի պարզ և ուղիղ են: Կարգապահութիւնը: Ամէն անգլիացիի համար կրթութեան առաջին սկզբունքն է. Ստութեան զգուանքը ներշնչել: Ստու- խօս մակդիրը երիտասարդի մը համար ա- մենէն աւելի ցաւալի հարուածն է, այս նախատինքնին դէմ ան ինքնաբերաբար կը զրգոտի: Հեղինակը կը յիշէ օր մը ան- գլիական դպրոցի մը մէջ աշակերտ մը յանդիմանած ըլլալ՝ ընկիթ գործ մը իրեն յանձնելու անհոգ գտնուելուն համար. և որովհետև յանդիմանութիւնը կ'ակնարկէր աշակերտին տուած խօսքին մէջ թերանա- լը, ան ոտք կ'իլէ կարմրցած, սաստիկ զայրացած, գրեթէ եղերեբզական կերպով.

Do you take me for a liar? Ձիս ստախօս ոտնմկ կը բռնես. վարժապետը կը հասկնայ թէ ազնիւ զգացում մը վի- բաւորած է և իր համարումը կը հաւաստէ աշակերտին բարի կամեցողութեան վրայ: Չստելը բրիտանիացի երիտասարդ ա-

շակերտին. պատուի կանոնն է, ան տուած խօսքին յարգը, ստանձնած պարտաւորու- թիւնը գիտէ: Ըրած սխալը չուրանաւ: Ա- պահով է որ իր ընկերները անց զարմա- ցում և դրուատիքը չէին ունենար իրեն համար, ինչ որ մեր մէջ ուսուցիչը ճար- տարութեամբ խաբել գիտողին հանդէպ կ'ունենան: Վարժապետները մեծ մարդու մը վրայ խօսելուն, անոր անկեղծութեան առաքինութիւնը միշտ կը գովեն. ան ազ- զային առաքինութիւն մըն է արտայայտիչ բրիտանացիներու նկարագրին: Նելսըն, Կորդըն, Լիվինկսթըն թաշախոտ մարդիկ էին անշահասէր և ճշտութեան թշնամիք:

Կարգապահութիւնը Անգլիոյ մէջ այն կասկածոտ հետազոտող քնոյթը չունի, ինչպէս մեր դպրոցներուն մէջ. վասն զի կը ձկտի սրտին մէջ անձնական պատաս- խանատուութեան զգացումը դնել, զայն գիտակից ընել իր գործերուն բարոյական արժէքին: Դպրոցներէն շատերուն մէջ, ա- շակերտները զքօսանքի ժամերուն ազատ են առանձին շրջապայելու, ամէնն ալ լռե- լեայն խօսք տուած ըլլալով, լաւ վար- մունք մ'ունենալ և չզեղծանիլ իրենց վրայ եղած վստահութենէն, դպրոցին ա- նունը չվատահամբաւել և պակսելուն՝ իբր անարժան կ'արտաքսուին, որ շատ հա- զուաղէպ է:

Ամէն դպրոցներու մէջ՝ լաւագոյն աշա- կերտներէն մէկը կ'որոշուի որ մեծ եղօք պաշտօն կը կատարէ, անոր՝ ընկերները կը ցուցնեն հպատակութիւն և սէր իբր վարժապետի մը: Ամենէն երիտասարդնե- րը մեծերուն մասնաւոր յարգանք մ'ու- նին և ասոնք juniors կրտսերագոյննե- րուն ներկայութեան՝ օրինակով սորվե- ցնողի մը նման, ծանր վարմունք և լուրջ լեզու մը կը գործածեն:

Պատիվները: Մարմնական պատիօսները հազուադէպ են, թէպէտ ուրիշները ուրիշ կերպ կարծեն և զօրծածութենէ կ'իյնան: Անգլիա, մեզի պէս՝ տղայոց տաժանելի և անօգուտ պատիօ չեն տար: Caring, որ զաւազանի այս ինչ թիւով պատիօ մ'է վարժապետներու և դասընկերաց ներկա-

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՔԱՎԱԲԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ը Ն Դ Մ Է Զ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՈՌՎԱՍՅ**

190 Ն. Ք. մինչև 428 յ. Ք.

Գ.

Արտաշէս Բ իր հօր վրէժը կ'առնէ Հոով-  
մայեցիներէն. — Տիրեղիս ի Հայաս-  
տան. — Տիգրան Գ և Երատայ կ'իշ-  
խէ Պարթևաց զօրոչքամբ. — Վախ-  
ձան Արտաշէսուսն հարստութեան և դա-  
դրուսն ազգային դրամակիրութեան:

յութեան, ամենէն աւելի փոքրերուն կը  
յատկացուի, և անոնց համար իսկ՝ գրե-  
թէ բոլոր դպրոցներէն վերցուցեր են. նե-  
ղացուցիչ, անտանելի և անօգուտ pen-  
sumի գործածութիւնն ալ կը թողուի:  
Տղանքներ աշխատութեան մղելու համար,  
— և այս բանիս պէտք կայ՝ որովհետև հոս  
ուրիշ տեղերէ աւելի շատ կան մտաւոր աշ-  
խատութեան դէմ խորշում ցուցնողներ —  
ուրիշ միջոցներու կը դիմուի. ինչպէս «խո-  
րանարդ ընել» որ է՝ գրաւոր, երրորդ կա-  
րողութեան բարձրացնել տար, քսան, և  
բեսուն տրուած թիւերը: Լաւ չտրված  
դասերը նորէն կրկնել կու տան, և, ի  
դէպ՝ նշանակելի է որ անգլիացի ուսու-  
ցիչները սովոր են աշակերտներուն շատ  
և յաճախ հարցումներ ընել, և բերանացի  
կրթութեան գրաւորէն աւելի կարեւորու-  
թիւն կու տան:

Այս է ահա անգլիական դպրոցներու  
կարգապահութիւնը. անտարակոյտ արդիւն-  
քը լաւ պիտի ըլլայ, եթէ նոյն իսկ մերթ  
ըմբոստ տարբերով, սխալի. այս պարա-  
զային Անգլիայի մէջ գէշ աշակերտներ և  
դպրոցներ միւս երկիրներէն աւելի չարա-  
զոյն կ'ըլլան: Բայց ասոնք բացառութիւն-  
ներ են. շատ դէպքերու մէջ ազգիական  
դրութիւնը հիանալիօրէն կը զարգացնէ  
self-control ինքնիրեն տիրելը, և կը  
պատրաստէ հասուն, հզօր և արդի կեան-  
քին: Մենք լատիններս փորձառութիւն և  
օրինակ կրնանք առնել անգլիացի դաս-  
տիարակներէն, բայց շատ կը սխալինք եւ  
թէ ուզենք ամէն բանի մէջ անոնց նմա-  
նիլ, մեր մտայնութիւնը տարբեր է, տար-  
բեր մեր աւանդութիւնները: Անգլիայի մե-  
ծութիւնը ազատութեան սիրոյն և անհա-  
տական նկարագիրներու ուժգնութեան վը-  
րայ հիմնուած է, իսկ մերը խելքի ուժին  
և մտաց ըմբռնումին վրայ:

Թրգմ. Հ. Գ. ԼԱԶԱՐԵԱՆ

Minerva Թերթէ



Այդ միջոցին ԱՐՏԱՃԵՍ Բ. (34-20  
Ն. Ք.)՝ պարթևական արքունեաց մէջ  
կրցեր էր ազնեցութիւն գործել թագաւո-  
րին վրայ և Հրաշտան Գ վտնջ անմիջա-  
պէս գործի սկսել: Վասնզէ՛ Տիգրանի ար-  
քունիքը Արտաւազը կրնար նկատել իբրև

1. Այս անուն մեր Mon. Anc. V վրայ և Դիոնի  
49, 39. 40. 44; 51, 16 մէջ է Artaxes, 'Αρτάξης,  
որ ճիշդ մեր Արտաշէս ձեռն կը համարաստանենէ, Առ-  
բիշ Նիդիակներ տարբեր մէ մը կը գործածեն, Arta-  
xias, 'Αρταξίας. այսպէս Տակիտոս տար. 2, 5 և Յով-  
սեպոս Հնար. 15, 4, 3. (Վիլէրոս Պատերկուս 2, 94  
պէտք չէ հոս նկատի առնուիլ, զի պարբերութիւնը ան-  
ճիշտ է. իսկ Դիոնի 54, 9 սոսկ սխալմամբ միայն 'Αρ-  
ταξάξιος գրուած է): Սկզբնական մեծը այս չին իրա-  
նեան թագաւորական անունն է Արտաշէսը, որ է  
«գերագոյն իշխանութիւն ստացող», չմտ. Judeioh առ  
PW Artaxerxes, զոր նա Սասանեանց հիմնադիրը  
Արտաշէր գործածեց և այն ձևով ալ գրած է: Դոյն ա-  
նուն յետագոյն ձեւերն են Արտաշէր, Արտաշէր և  
Արդաշէր, չմտ. Nöldeke առ PW. Artaxerxes 5:  
Հայոց պատմութեան մեր խօսելիք շրջանին մէջ չորս  
թագաւորներ կը կրնն այս անունը. ստաշին և վերջինը,  
Չենոն—Արտաշէս և ներկայս: Միմեծութեան համար ես  
չորսին համար ևս Artaxias Արտաշէս մեծ կը գոր-  
ծածով: